135. ԹԱՔԱՎԸԵՐԻ ՀԱՐԿԸ

Մի թաքավրեր ամեն տեսակ հարկ ա հրվաքում, էլ գյիդում չի ինչ տեսակ հարկ հվաքի։ Մի թաքավրերի խաղնեն տռտակվրե։ ա, էլ ճար չիկա։ Թաքավրերը վաղիրին կանչում ա, ասում ա. «Վաղիր, մի հնար քթի, նոր հարկ տնենք, ի՞նչ անում տնենք, վրեր թուգա հարկ հվաքենք»։

Վաղիրը ասում ա. «Թաքավրեր, արի մի սհե հրաման կտրի։ ում անումը Մահմադ ըլի՝ հինդ վրեսկի տա, ում կնդյա անումը Ֆաթմա ըլի՝ նա էլ հինդ վրեսկի տա, ում մի էշ ունենա՝ նա էլ հինդ վրեսկի տա, ով փինաչի ըլի՝ նա էլ հինդ վրեսկի տա, ով քաչալ ըլի՝ նա էլ»։

Հարկ հվաքողնին ճամփա են ընդնում, քյնում. հասնում են մի տրեղ, տրեսնում են հրես մի փինաչի, ասում են. «Էս քու դուքյանն ա»։ Ասում ա. «Հա՛»։

Ասում են. «Տու փինաչի՞ ես»։ Ասում ա. «Հա՛, էս ա հինդ տարի ա փինաչութին եմ անում»։

Ասում են. «Թաքավրերի հրաման ա, վրեր ով փինաչի ա՝ պետք ա հինդ վրեսկի հարկ տա»։

Սա շատ ա ղրլմրղալ անում, ասում ա. «Կարալ չեմ, շատ ա, ես վրերդիա՞ն տամ հինդ վրեսկին»։

Վրեր սրա տրեղը նեդում են, սա կնդյանը կանչում ա, ասում ա. «Ա՛ Ֆաթմա, քյնա մի հինդ վրեսկի պի, տանք «հանց, բյնան, կորչենա»։

Հարկ հվաքողը ասում ա. «Էս ո՞վ ա»։ Ասում ա. «Իմ կնիկն ա»։

Ասում ա. «Պա՜, թաքավրերի հրաման ա, ում կնդյա՜ անումը Ֆաթմա ըլի՝ հինգ վրեսկի էլ պետկ է նա՜ առ»։ Կանչում ա, ասում ա. «Ֆաթմա ջա՜ն», մհել էտ հադադին կնիկը ասում ա. «Մա՜հմա՜դ ջան, կացի հիմի կպիրեմ»։

Ասում են. «Անումդ Մա՜հմա՞դ ա»։ Ասում ա. «Հա՜»։

Ասում են. «Հինգ վրեսկի էլ տրա՜ մհար տուս»։ Մա ասում ա. «Ֆաթմա ջա՜ն, տասնըհինգ վրեսկի պիտ»։ Ասում ա. «Մա՜հմա՜դ ջան, կացի էշը կապեմ, պիրեմ»։

Ասում են. «Քու էշն ա՞»։ Ասում ա. «Հա՜»։

Ասում են. «Թաքավրերի հրաման ա, հինգ վրեսկի էլ իշիտ մհար տուս»։

Տհանք, վրեր շատ սրա տրեղը նեղում են, էս մարթը նեղանում ա, փափախը տափովն ա տալի։ Սհանք տրենում են, վրեր սա քաչալ ա, ասում են. «Պա՜, քաչա՞լ ես, հինգ վրեսկի էլ քաչալութենիտ մհար տուս»։

Սհանք էտ հինգ տեսակ հարկն էլ էս խեղճ փինաչուցը առնում են ու քյնում։